

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի ՆՊԱՏԱԿԸ

Հայրենի թագին շքեղութիւնը, հայ քաղաքակրթութեան գանձերը անյայտութեան ծոցէն դուրս կորզելու եւ դիտութեան լոյսին տակ հասարակութեան մատչելի դարձնելու բուն փափագը տուած է «Հանդէս Ամսօրեայ»ին ծնունդ եւ անոր կեանքին մղում:

Հայ ժողովուրդի հայրենիքը, լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, կենցաղը, արուեստը... ուսումնասիրել նպատակն եղած է «Հանդէս Ամսօրեայ»ի:

Հայ մշակոյթի ուսումնասիրութեան հիմը դնել արդի քննադատութեան ոգևով ձգտումն եղած է «Հանդէս Ամսօրեայ»ի:

Նոր հետազոտութիւններով քողազերծ ներկայացնել հայ քաղաքակրթութեան ելեւէջները հայրենակիցներուն եւ օտարներուն, թարգմանաբար կամ քաղուածօրէն օտար ազգերու հայագիտական ուսումնասիրութիւնները ծանօթացնել հայ ընթերցողներուն պաշտօնն եղած է «Հանդէս Ամսօրեայ»ի:

Խթանել տոհմիկ եւ տարաշխարհիկ գրագէտները անձնուէր միջամուխ ըլլալու հայագիտութեան մէջ պարտքն եղած է «Հանդէս Ամսօրեայ»ի:

Համախմբել բանասէր անհատները, եկեղեցական թէ աշխարհական, հայ թէ օտար, ձեռն ի ձեռն աշխատակցութեամբ բարձրացնելու հայ մշակոյթի պատմութեան շէնքը, ջանքն եղած է «Հանդէս Ամսօրեայ»ի:

Քառասուն եւ հինգ դարուններ բոլորեց «Հանդէս Ամօրեայ» հայագիտական ասպարէզի վրայ. վարդապետակ կը նայի յետս գիտելու փունջերը վարդի, որոնք բազմաթերթ սփռուած են իւր ճանապարհի վրայ: «Հանդէս Ամօրեայ»ի հատորները համապայծառ գունով կը ներկայացնեն համայնագիտարան մը հայագիտութեան: Ինչ որ 45 տարիներու ընթացքին ծնունդ առաւ իր ծոցէն, կը գերազանցէ որակով եւ թուով այն ամէն արտադրութիւնները, զորոնք տուաւ նոյն շրջանին բովանդակ հայ մամուլը հայագիտութեան մարդին մէջ: Հայագիտութեան ամէն ճիւղ ծլեցաւ եւ զարգացաւ հոն մրգաշատ եւ պտղալից:

Շնորհիւ այս գործունէութեան շահեցաւ «Հանդէս Ամօրեայ» համակրութիւնն ոչ միայն հայ գրագէտներու եւ բանասէրներու, այլ եւ օտար արեւելագէտներու, հայերէնագէտներու եւ բարձր հիմնարկութիւններու. անոնք ապրեցան սերտ յարաբերութեան մէջ «Հանդէս Ամօրեայ»ի հետ:

«Հանդէս Ամօրեայ»ն եղաւ թէ՛ պատճառ հայրենի մշակոյթի զարգացման եւ թէ՛ միջոց ծանօթացնելու հայ քաղաքակրթութեան ծալքերն օտար ժողովուրդներուն եւ արծարծելու անոնց մէջ հետաքրքրութիւն դէպ ի հայկականը:

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՔԸ

Ազգային մշակոյթի բարգաւաճման համար թափուած այս ջանքերը համաձայն էին ժամանակի պահանջներուն: Երբ ամէն մեծ եւ փոքր ազգեր կ'արծարծէին հետաքրքրութիւն դէպի ազգային հնութիւնները, հին քաղաքակրթութեան գրաւոր եւ անգիր յիշատակարանները, չէինք կրնար եւ մենք մնալ անտարբեր:

Նաեւ այժմ քաղաքակիրթ ժողովուրդներ բանալու համար սեպհական քաղաքակրթութեան պատմութեան ծալքերը, յանձն կ'առնեն մեծամեծ ծախքեր, կը հիմնեն ճեմարաններ, կը վարձեն մասնագէտներ, կ'օժտեն զանոնք առատատուր ոտճիկներով, որպէս զի պեղեն, վերահանեն փրատակներու, տակէն հին քաղաքակրթութեան նշմարները:

Եթէ Ազգիս անկազմակերպ, աստանդական վիճակը թոյլ չի տար՝ անոնց օրինակին նախանձաւոր ըլլալ եւ հիմնել ճեմարաններ, վարձել աշխատաւորներ հետազօտելու տոհմային քաղաքակրթութեան շերտերը, բայց կարող է գոնէ քաջալեր ըլլալ այնպիսիներուն, որոնք ինքնամատոյց կը լծուին աշխատութիւններու. խրախուսել հայագիտական ասպարէզի վրայ նահատակ բանասէրները, «Հանդէս Ամօրեայ»ի աշխատակից կամաւոր գինուորները:

Քառասուն եւ հինգ տարի շարունակ, ապաստան իւր ոյժերուն՝ Մխիթարեան Միաբանութեան հզօր պաշտպանութեան տակ, վարած է յառաջ «Հանդէս Ամօրեայ»ն հայագիտական ուսումնասիրութիւնները, գիմագրաւ ամէն դժուարութիւններու, գիտակից քաջ թէ իւր արտադրութիւններուն տոհմականները շեղջ շեղջ կը համբարուին հայրենի գիտութեան շտեմարանին մէջ: Ժամանակիս տնտեսական տագնապը պիտի պարտաւորէ՞, որ կասի «Հանդէս Ամօրեայ» իւր ճանապարհի վրայ. եւ կամ ուսումնաթերթը, որ Եւրոպայի սրտին մէջ բուն դրած հայ Միաբանութեան մը կուրծքէն սկիզբ կ'առնէ, հրաժարի իւր ուղղութենէն եւ հաճոյանալու համար ժամանակիս քմահաճոյքին՝ նետուի վիպասանութեան եւ գաւեշտի գիրկը: Քաւ լիցի: Եթէ մինչեւ այսօր չուզեց հասարակութիւնը գնահատել ըստ արժանւոյն տարիներու քրտանց այս վաստակը, կը յուսայ «Հանդէս Ամօրեայ»ն թէ պիտի ծագի շուտ կամ անագան գարթօնքի ժամը:

Եթէ կան անձնագոհ մարտիկներ, որոնք անձնատուր փարած ազգօգուտ գործի, անշահախնդիր՝ դէտակն են միայն հայրենի փառքին; պէտք ունին անոնք ընդհանուրի քաջալերութեան: Հին դարերուն թագաւորներ, իշխաններ կը հանդիսանային մեկեկաններ երգել տալու հայրենի փառքին նուազը: Եթէ չկան անոնք այժմ, բայց կ'ապրին անոնց քաջարիւն սերունդները. կը մնայ նուիրական պարտք անոնց կուրծքին վրայ՝ հանդէս գալ իբրեւ հովանաւորողներ բանասիրական եւ գիտական աշխատանքներու եւ քաջալեր կարգալ մասնագէտ գրագէտներու, արօրագիր, ախօսարեկ հերկելու հայրենի հնութիւններու անմշակ անդաստանը: Այս պարտքն է հայ մեծատուններուն, վաճառականներուն, տնատէրերուն ու գործատէրերուն, ուր որ ալ հաստատած ըլլան անոնք իրենց բնակութիւնը: Պարտքն է ամէն հայ անհատին մատակարարել ազիւս հայ մշակոյթի պատմութեան հոյակապ շէնքին կառուցման համար:

ԿԸ ԵՆԿՐՈՒԻ Ո՛Ձ ՆՊԱՍՏ, ԱՅԼ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Ապրեցնելու համար ներկայ տնտեսական տագնապի մէջ հայագիտական ուսումնաթերթ մը, որպիսին է «Հանդէս Ամսօրեայ»ն, պիտի պահանջուի դոյզն զոհաբերութիւն մը: Ո՛չ մեծագումար կամ միանուագ նուէր, այլ տեւական բաժանորդագրութիւն:

«Հանդէս Ամսօրեայ»ի տարեկան բաժանորդագինն է հինգ տոլար:

Ո՛չ վաճառական, ո՛չ արհեստաւոր, ո՛չ բժիշկ եւ ո՛չ մասնական խանութպան պիտի չքայքայուի, չխանդարուի իւր հաշիւներու մէջ կամ մատնուի դրամական տագնապի, եթէ զոհաբերութեամբ այս հինգ տոլարնե-

րու ի նպաստ հայ բանասիրութեան զարգացման՝ բաժանորդագրուի «Հանդէս Ամսօրեայ»ի:

Եթէ վաճառատուն մը պիտի ապրի տագնապի վայրկեաններ զոհաբերելով 5 տոլար բաժանորդագինս, որպիսի՛ վարանքի պիտի չմատնուի «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը, որ աւելի քան 1600 տոլար տարեկան ելքի փոխարէն եւ ոչ քառորդը կարող է մուտքի մատենին մէջ անցնել: Եթէ «Հանդէս Ամսօրեայ» յանձն կ'առնէ հայրենի անդաստանին մէջ վաստակիլ անվարձ, մատնուած տօթի եւ խորշակի, յօգուտ եւ ի պարծանս համայն հայութեան, պիտի պահանջուի հասարակութենէն, հայ մեծատուններէն, մեծէն եւ փոքրէն, որ յանձնառու ըլլար գոնէ տպագրական ծախքերուն, եթէ ոչ մեծագումար նուէրներով, բայց գոնէ լոկ բաժանորդագրութեամբ:

ՊԱՏՐՈՒԱԿՆԵՐ

«Հանդէս Ամսօրեայ»ի լուրջ եւ մասնագիտական բովանդակութիւնը գլխաւոր պատճառը նկատուած է ուսումնաթերթին նուազ տարածման: Ոչ այնչափ ժամանակի տնտեսական տագնապը, որչափ հայ մեծատուններու անշահագրգռութիւնն եւ անտարբերութիւնն եղած է տարածման խափանարար պատճառը: «Ազգօգուտ Ուսումնաթերթիդ բովանդակութիւնը թէպէտ յոյժ շահաւէտ է, բայց չըլլալով ինձ համար շահագրգիռ՝ պիտի խնդրեմ, որ հաճիք դադրեցնել առաքումը»: Ահա այն պատասխանը, որ կը հասնի ստէպ ստէպ Խմբագրութեանս: Տեղը չէ՞ ողբալու Մ. Խորենացոյ հետ «գանուսումնասէր բարս» ներկայ սերունդին: Եթէ «ազգօգուտ»է ուսումնաթերթը, «շահաւէտ» բովանդակութիւնը, ապա պէտք է ապրի այն Ազգին համար. իսկ ապրելու համար պէտք է իւրաքանչիւրն ըստ կարողութեան նպաստամատոյց ըլլայ գոնէ բաժանորդագնով:

Հայրենասէ՛ր, նպաստէ գէթ աղիւսով մը հայագիտութեան շինուածքին կառուցման, եւ պիտի հնձես շնորհակալիքը հայ բանասիրութեան. գրուէ՛ բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Հայրենասէ՛ր, եթէ չես գտներ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ յագուրդ քու ճաշակիդ, տո՛ւր գոհացում հայ գրագէտներու, ուսուցիչներու ծարաւին, գրէ՛ զանոնք բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Հայրենասէ՛ր, եթէ անձամբ չես կարող հետաքրքրուիլ «Հանդէս Ամսօրեայ»ով, տո՛ւր գրգիռ երիտասարդ սերունդին, գրէ՛ բաժանորդ դպրոցներն ու որբանոցները:

Հայրենասէ՛ր, եթէ չունիս միջոց գրուելու բաժանորդ, չարժէ՛ ընկերդ, յորդորէ՛ դրացիդ որ գրուի բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Ամէն ջանք Ազգին համար, ամէն վաստակ եւ զոհաբերութիւն հայ մշակոյթի պայծառութեան համար:

Խմբագրութիւն «Հանդէս Ամսօրեայ»ի:

ՉԱՅՆԵՐ Ի ՆՊԱՍՏ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», Ի

ԳՆԱՀԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի ՄԱՍԻՆ

Յաջորդ տողերս թող վկայեն թէ ինչպէս ընթացած է «Հանդէս Ամսօրեայ» իւր ճանապարհին վրայ եւ ինչպէս զնահատուած է հայ աշխարհին եւ առ հասարակ Եւրոպայի մէջ: Յառաջ կը բերենք մաս մը միայն այն բազմաթիւ համակրական խօսքերէն, որոնք ուղղուած են Խմբագրութեանս թղթով կամ հրատարակագրութեան մէջ այլ եւ այլ առիթներուն:

«Հանդէս Ամսօրեայ», իր հրատարակութեան ԽՅ. տարիներու ընթացքին, արդարացուցած է իր ուսումնական թերթի կոչումը:

Եւրոպացի արեւելագէտներու եւ մանաւանդ հայագէտներու կողմէն Հայոց մասին, Հայ լեզուի, Հայ Պատմութեան եւ Հայ Մատենագրութեան, ինչպէս նաեւ Հայ Գեղարուեստի ու Հայ Հնագիտութեան շուրջ կատարուած բոլոր հետազոտութիւններ եւ ուսումնասիրութիւններ, «Հանդէս Ամսօրեայ»ի սիւնակներուն մէջ, մատչելի եղած են հայ բանասէրներու, եւ փոխադարձաբար «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակուած հայերէն ուսումնասիրութիւններ՝ դիւրութեամբ գրուած են Եւրոպացի Հայագէտներու աչքին սուղեւ:

«Հանդէս Ամսօրեայ»ի այս ծառայութիւնն ո՛չ միայն կ'աւելցնէ հրատարակուած հայ մտքի արտագրութեանց արժէքներուն, հանդէպ Եւրոպայի գիտական կամ ուսումնական աշխարհին, այլ նաեւ այս թանկագին հրատարակութիւնը հիանալի ազդակ մը եղած է Հայկական Դատին, գոնէ զիտուններու եւ ուսումնականներու շրջանակին մէջ հասկցողութիւնը դիւրացնելու եւ համակրանք ճառագայթեցնելու համար: